

Հ Ա Մ Ա Չ Ա Յ Կ Ա Գ Ի Ր

Խորհրդային Հայաստանի եւ Արցախի վարժարաններու մէջ
համակարգիչի խտացեալ դասընթացներու համար

Թուական.--- 30 Յուլիս, 1989

Թեմա.--- Սփիւռքի կողմէ Խորհրդային Հայաստանի եւ Արցախի վարժարաններու մէջ
համակարգիչի դասընթացներու կազմակերպում.

Ստորագիր կողմեր.---

Սփիւռքի կողմէ՝

Հայ Օգնութեան Միութիւն - ՀՕՄ

Խորհրդային Հայաստանի կողմէ՝

Որոնում Կեդրոն - ՈԿ եւ

Համակարգիչներու Միջազգային Ակումբի Հայկական Մասնաձիւղ - ՀՄԱՀՄ.

Ծրագրի անուանակոչում.--- ԴԷՊԻ ԵՐԿԻՐ - 1 - ԴԵ1.

ԿՊԱՏԱԿ.---

Խորհրդային Հայաստանի գիւղական ու երկրաշարժէն վնասուած շրջաններու եւ
Արցախի վարժարաններ այցելել եւ իւրաքանչիւրին մէջ համակարգիչներու ակումբ մը
հաստատելով, կարճ ժամանակով համակարգիչներու խտացեալ դասընթացներ կազմակերպել
խնդրոյ առարկայ վարժարաններու աշակերտութեան համար:

Նոյն շրջաններուն մէջ, համակարգիչներու շրջուն ակումբները նոյն դասընթացքը
կը կազմակերպեն նաեւ ոչ-աշակերտներու համար՝ վարժարանի ժամերէն դուրս: Այս դա-
սընթացքներուն հետեւողները կրնան ըլլալ խնդրոյ առարկայ վարժարանի աշակերտներէն
վատ ոեւէ անհատ, առանց տարիքի կամ սեռի խտրութեան:

ՍԱՐՔԵՐ.---

-- 10 IBM compatible համակարգիչներ, հետեւեալ տուեալներով.-

-- 512 KByte RAM;

-- CGA Graphics Adaptor;

-- Color Monitor (640 * 200 dot resolution);

-- Two floppy disk drives (DSDD - 360 KByte);

-- One mouse;

-- One joystick.

-- 10 dot matrix, 80 characters/line տպիչներ.

-- 1000 diskettes (Double Side/Double Density).

-- 20 Ծնտուկ continuous form տպիչներուն համար:

ԱՆՉԿԱԿԱԶՄ.---

10-12 Երիտասարդ-Երիտասարդուհիներ, վկայեալ համակարգիչներու գիտութեան վա-
նական ձիւղերու:

ԺԱՄԱՆԱԿԱՄԻՋՈՑ.---

18 Սեպտեմբեր, 1989-էն 15 Ղեկտեմբեր, 1989, կամ՝

25 Սեպտեմբեր, 1989-էն, 22 Ղեկտեմբեր, 1989:

ՊԱՅՄԱՆՆԵՐ.

Ա.---ՀՕՄը կը ստանձնէ ՍԱՐՔԵՐ գլուխին տակ յիշատակուած բոլոր կազմամներու գնումը.

Բ.---ՀՕՄը կը ստանձնէ ԱՆՉՆԱԿԱԶՄ գլուխին տակ յիշատակուած 10-12 երիտասարդ-երիտասարդուհիներու ապահովումը.

Գ.---ՀՕՄը կը ստանձնէ ԴԵ-1-ի սկզբնաւորութեան անձնակազմի բոլոր անդամներու մինչեւ երեւան տեղափոխութեան ծախսերը.

Դ.---ՀՕՄը կը ստանձնէ ԴԵ-1-ի աւարտին անձնակազմի բոլոր անդամներու երեւանէն իրենց փափաքած տեղը տեղափոխութեան ծախսերը.

Ե.---ՀՕՄը կը ստանձնէ, ԴԵ-1-ի անձնակազմին միջոցով համակարգիչի շրջուն ակումբներու դասընթացքի պատրաստութիւնը.

Զ.---ՈԿը եւ ՀՄԱՀՄը կը ստանձնեն ՍԱՐՔԵՐ գլուխին տակ յիշատակուած կազմամներու կանխաւ ծշդուած մէկ կէտէ դէպի երեւան տեղափոխութիւնը, որ կ'ընդգրկէ հետեւեալները.-

Զ-1.---Տեղափոխութեան ծախսեր.

Զ-2.---Անձնակազմը փոխադրող նոյն օդանաւով ապահովել կազմամներու տեղափոխութիւնը դէպի երեւան.

Զ-3.---Մոսկուայի մէջ խորհրդային Հայաստանի պաշտօնական ներկայացուցչութենէն ապտուիրակութեան մը Մոսկուայի օդակայան ներկայութեան ապահովումը, դիրացնելու համար ԴԵ-1-ի անձնակազմի թէ սարքերու մաքսային գործողութիւններն ու մէկ օդակայանէ այլ օդակայան տեղափոխութիւնը: Այս կէտը իր ուժը կը կորսնցնէ ինքնաբերաբար, եթէ սարքերն ու անձնակազմը երեւան հասնին ուղղակի թռիչքով:

Է.---ՈԿը եւ ՀՄԱՀՄը կը ստանձնեն ԴԵ-1-ի անձնակազմի եւ սարքերու տեղափոխութեան եւ կեցութեան ծախսերը ծրագրի իրագործման ամբողջ տեւողութեան: Այս կէտը բաժարցակապէտ չընդգրկէր նիւթական որեւէ տեսակի յատուցում անձնակազմի անդամներէն ոեւէ մէկուն:

Ը.---ՈԿը եւ ՀՄԱՀՄը կը ստանձնեն ԴԵ-1-ի անձնակազմէն երեք կամ չորս հոգիի համար Արցախ մուտքի եւ կեցութեան պաշտօնական ձեւակերպութիւնները: Այս խմբակի անդամները կը ծշդուին ՀՕՄին կողմէ:

Թ.---ՈԿը եւ ՀՄԱՀՄը կը ստանձնեն խորհրդային Հայաստանի մէջ 12 իսկ Արցախի մէջ 4 զիւղերու-շրջաններու եւ վարժարաններու ցուցակի մը պատրաստութիւնը, ուր տեղի պիտի ունենան համակարգիչներու շրջուն ակումբներու դասընթացքները: Ցուցակը պէտք է ՀՕՄին փոխանցուի ամէնէն ուշը մինչեւ 25 Օգոստոս, 1989:

Ժ.---ՀՕՄը կը ստանձնէ անձնակազմի անդամներու անունները ամէնէն ուշը մինչեւ 25 Օգոստոս 1989 փոխանցել ՈԿին եւ ՀՄԱՀՄին, խորհրդային Միութիւն եւ խորհրդային Հայաստան ու Արցախ մուտքի արտօնութեանց ձեւակերպումներուն համար:

ԻԱ.---Անձնակազմի անդամները եւ կազմամները երեւան պարտին հասնիլ ԴԵ-1-ի սկսման թուականէն 3-5 օր առաջ:

ԳՈՐԾԵԼԱԶԵԻ.

-Անձնակազմի անդամները կը բաժնուին չորս խումբերու. իւրաքանչիւր խումբ պարտի դասաւանդել չորս վարժարաններու մէջ.

-Իւրաքանչիւր վարժարանի մէջ համակարգիչի շրջուն ակումբը կը գործէ երեք շաբաթ.

-Ղասընթացքը կ'ընդգրկե համակարգիչներու գիտութեան ընդհանուր ներածական մը եւ համակարգիչներու օգտագործման գործնական ծանօթացում խաղերու թէ վանապան այլ յայտագիրներու ծամբով:

-Ղասընթացքները կը տրուին հայերէն լեզուով:

-13րդ շաբթուան ընթացքին կը կազմակերպուի մրցութիւն մը, եւ համակարգիչները կը բաժնուին առաջին տասը դիրքերը զրաւող վարժարաններուն:

ԱՅԼ.---

Ա.--Այս պայմանագրի կէտերէ որեւէ մէկուն յիփոյնութիւնը կը կարօտի ստորագիր բոլոր կողմերու համաձայնութեան: Ստորագիր կողմերէն որեւէ մէկը երբ կը խզէ պայմանագրութեան կէտերէն որեւէ մէկը, դիմացի կողմը ինքնաբերաբար իրաւունք կը ստանայ ամբողջ պայմանագիրը խզուած նկատելու:


Բ.--Այս պայմանագիրը, ստորագրուելէ անմիջապէս ետք կը դրուի Խորհրդային Հաստատանի թէ Սփիւռքի հայ մամուլի տրամադրութեան տակ՝ առ ի հրատարակութիւն:

ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ.---

Ի դիմաց
ՈՐՈՆՈՒՄ ԿԵՂՈՒՆ-ի՝



Ի դիմաց
ՀԱՄԱԿԱՐԳԻՉՆԵՐՈՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱԿՈՒՄԲԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՆԱՃԻՒՂ-ի՝



Ի դիմաց
ՀԱՅ ՕԳԵՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ՝

(Այս Պայմանագրութիւնը ստորագրուած է երեք օրինակով:)
